





2020թ. ԲՅՈՒՋԵԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ




Ներկայացնող՝

Մակրոտնտեսական քաղաքականության
վարչության պետ Էդուարդ Հակոբյան




Բովանդակություն

- Արտաքին աշխարհի զարգացումներ և կանխատեսումներ
- ՀՀ տնտեսության զարգացումներ և մակրոտնտեսական կանխատեսումներ
 - Տնտեսական աճ և գնաճ
 - Վճարային հաշվեկշիռ, արտահանում և ներմուծում
 - Հարկաբյուջետային քաղաքականություն և հարկաբյուջետային շրջանակ
- 2020թ. պետական բյուջեի ամփոփ մակրոտնտեսական շրջանակ



Մակրոմիջավայր






Կանխատեսումներ. մեթոդաբանություն և տվյալների բազաներ

- **Կանխատեսման մեթոդները՝** Կանխատեսումներն իրականացվել են բազմագործոն էկոնոմետրիկ մոդելների, վիճակագրական մեթոդների և փորձագիտական գնահատականների միջոցով:
- **Տվյալների աղբյուրները՝** ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական վիճակագրության պատմական ցուցանիշները և ընթացիկ զարգացումները, ՀՀ կենտրոնական բանկի և միջազգային կազմակերպությունների (Արժույթի միջազգային հիմնադրամ, Համաշխարհային բանկ, Բլումբերգ) տեղեկատվությունը և կանխատեսումները:
- **Մոդելներում հաշվի առնված գործոնները** նկարագրված են ստորև ներկայացված համապատասխան սլայդներում:



Տնտեսական աճի աշխարհում

- ✓ 2019թ. համաշխարհային տնտեսության ակտիվության, ինչպես նաև գործընկեր երկրների աճի դանդաղում:
- ✓ 2020թ. համաշխարհային տնտեսական աճի, ինչպես նաև ՌԴ տնտեսական աճի արագացում:





* ԱՄՀ-ի 2019թ. հուլիսի կանխատեսումներ




Պղնձի և նավթի համաշխարհային գների դինամիկա

2019-2020թթ.-ին կանխատեսվում է նավթի և պղնձի գների նվազում



Նավթի գները ապրիլին կատարված կանխատեսումների համեմատ հուլիսին վերանայվել են աճի ուղղությամբ:
 Պղնձի գների կանխատեսումները հուլիս ամսին չեն հրապարակվել:


ՀՀ տնտեսության զարգացումներ և մակրոտնտեսական կանխատեսումներ





2019 թվականի ընթացիկ զարգացումներ. տնտեսական աճ


Ճյուղերի նպաստումները տնտեսական աճին



2019թ. տնտեսությունում արձանագրվել են աճի բարձր տեմպեր, ինչը պայմանավորված է եղել հիմնականում ծառայությունների բարձր աճով: Մյուս ճյուղերը բացառությամբ գյուղատնտեսության և նպաստել են տնտեսական աճին:



2019 թվականի ընթացիկ զարգացումներ. տնտեսական ակտիվություն




2019թ. տնտեսությունում արձանագրվել են աճի բարձր տեմպեր, ինչը պայմանավորվել է հիմնականում ծառայությունների և արդյունաբերության (մշակող) բարձր աճերով: Շինարարությունը նույնպես նպաստել է տնտեսական ակտիվությանը, սակայն գյուղատնտեսությունը* շարունակել է նվազել:

*Գյուղատնտեսության ցուցանիշն հրապարակվում է եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ:



Տնտեսական աճի կանխատեսումներ և տեսության ճյուղերի նպաստում աճին

Այս պայմաններում 2019թ. կանխատեսվում է 6.3% աճ, իսկ 2020թ.՝ կայունացում պոտենցիալ աճի շուրջ*




* Մոդելներում օգտագործված գործոններն են՝ արտաքին պահանջարկ (մասնավորապես՝ ՌԴ ՀՆԱ), վարկավորման ծավալներ, իրական տոսկոսադրույքներ, գնաճ, իրական փոխարժեք, միջազգային գներ, տրանսֆերտներ:



Տնտեսական աճի կանխատեսումներ և պահանջարկի բաղադրատարրերի նպաստում աճին

2019-2020թթ. տնտեսական աճը հիմնականում կապահովվի ներքին պահանջարկի (սպառում և ներդրումներ) հաշվին: Իսկ զուտ արտահանումը աստիճանաբար կբարելավվի:



Մոդելներում օգտագործված գործոններն են՝


Սպառում՝ տնօրինվող եկամուտ, սպառողական գների ինդեքս, իրական տոկոսադրույքներ, վարկավորման ծավալներ, պետական սպառում

Ներդրումներ՝ շինարարության աճ, ներմուծման աճ, վարկավորման ծավալներ, պետական կապիտալ ծախսեր




Պոտենցիալ ՀՆԱ և բիզնես ցիկլեր

Կանխատեսվող աճերի պայմաններում 2019-2020 թթ. իրական ՀՆԱ-ի ճեղքը կփակվի: Իսկ պոտենցիալի աճը միջնաժամկետում կարագանա՝ մոտենալով 5 տոկոսի նախկին 4-4.5 տոկոսի դիմաց:*




* ՀՆԱ ներուժային մակարդակը գնահատվել է ինչպես միագործոն, այնպես էլ բազմագործոն վիճակագրական ֆիլտրերի (HP, BP, Kalman) օգնությամբ, որոնց մեջ հաշվի է առնվում տնտեսական աճի պատմական տատանումները, ՀՆԱ-ի և գործազրկության միջև կապը, ինչպես նաև գնաճի և գործազրկության միջև կապը:



Տնտեսական աճի կանխատեսումների հավանականային քաշխումը

Տնտեսական աճի միջակայքը	Տնտեսական աճի՝ տվյալ միջակայքում ձյավորվելու հավանականությունը			
	2020 I եռ.	2020 II եռ.	2020 III եռ.	2020 IV եռ.
2-4%	0.24	0.23	0.24	0.25
4-6%	0.34	0.32	0.31	0.30
6-8%	0.24	0.23	0.22	0.21






Այլ կառույցների կողմից տնտեսական աճի կանխատեսումներ


2019-2020 թթ. ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները այլ կառույցների կողմից

	2019	2020
IMF (2019 հոկտեմբեր)	6.0%	4.8%
World Bank (2019 հոկտեմբեր)	5.5%	5.1%
ՀՀ կենտրոնական բանկ (2019 թվականի 3-րդ եռամսյակ)	6.9%	4.9%



Գնաճի զարգացումները և կանխատեսումները

Գնաճը կանխատեսվող հորիզոնում կգտնվի 2 տոկոսի շուրջ:






Ընթացիկ հաշվի զարգացումները և կանխատեսումները

2019-2020թթ-ին ընթացիկ հաշիվը, արտահանման առաջանցիկ աճով պայմանավորված, աստիճանաբար կբարելավվի՝ մոտենալով իր հավասարակշիռ՝ ՀՆԱ-ի նկատմամբ 3-4% մակարդակին:

ՀՆԱ նկատմամբ, %



	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Արտահանում	23.9	27.0	27.5	28.4	28.6	29.7	33.2	37.4	37.8	37.5	39.2
Ներմուծում	49.0	48.5	48.3	49.2	47.3	41.9	42.8	49.6	53.5	52.1	52.5
Դրամական փոխանցումներ	15.6	14.4	14.7	16.1	14.2	10.4	9.6	10.2	9.1	8.6	8.5
Ընթացիկ հաշիվ	-13.6	-10.4	-10.0	-7.3	-7.8	-2.7	-2.1	-3.0	-9.4	-7.0	-6.0
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-25.1	-21.5	-20.8	-20.9	-18.7	-12.1	-9.6	-12.2	-15.7	-14.6	-13.3


Մոդելներում հաշվի են առնվել հետևյալ գործոնները.

- ✓ **Ընթացիկ հաշվի հավասարակշիռ մակարդակ.** Հաշվի առնելով արտահանման, գնաճի, փոխարժեքի և այլ ցուցանիշների պայմանական և ընթացիկ միտումները չորս փուլերով մեթոդներով գնահատվել է պարտքը և ՀՀ միջազգային ներդրումային դիրքը կայունացնող ընթացիկ հաշիվ/ՀՆԱ մակարդակը (CA norm):
- ✓ **Դրամական փոխանցումներ.** ՌԴ փոխտեսական աճ, անվանական փոխարժեք, նավթի համաշխարհային գներ:



Ապրանքների և ծառայությունների արտաքին առևտուր (դոլարային աճ, %):

- Արտահանման աճի շարժիչ ուժ կհանդիսանա հիմնականում մշակող արդյունաբերության, ինչպես նաև ծառայությունների աճը:
- Ներմուծումը կաճի հիմնականում տնօրինվող եկամտի և ներքին պահանջարկի միտումներով պայմանավորված:



Մոդելներում հաշվի են առնվել հետևյալ գործոնները.

✓ **Արտահանում.** ՀՀ արտադրության ճյուղերի աճեր, գործընկեր երկրների արտադրության աճեր, համաշխարհային գներ, անվանական և իրական փոխարժեքներ:

✓ **Ներմուծում.** Սպառման և ներդրումների աճեր, տնօրինվող եկամտի աճ, ՀՀ և գործընկեր երկրների գնաճեր, անվանական և իրական փոխարժեքներ, արտահանում:



2019թ. հարկաբյուջետային շրջանակի ճշգրտումները

Ծախսերի գծով թերակատարում՝


- Հիմք է ընդունվել 2018թ. կատարողականները
- 62 մլրդ լրացուցիչ եկամուտներն են բաշխվել են ըստ ընթացիկ (40մլրդ) և կապիտալ ծախսերի (22 մլրդ)


	2018	2019		
	փաստ	2019 Բյուջե	Սպասում (ՄԺԾԾ 2020-2022)	2020 Բյուջե
Պետական բյուջեի եկամուտներ և պաշտոնական դրամաշնորհներ	1,341.7	1,496.5	1,558.5	1,567.0
Հարկային եկամուտներ	1,258.1	1,401.9	1,463.9	1,463.9
Ոչ հարկային եկամուտներ և պաշտոնական դրամաշնորհներ	83.6	94.6	94.6	103.2
Ծախսեր	1,447.1	1,648.1	1,710.1	1,609.6
Ընթացիկ ծախսեր	1,299.0	1,426.1	1,442.7	1,423.6
Ներքին ֆինանսավորում	1,284.1	1,393.5	1,410.0	1,405.9
Արտաքին ֆինանսավորում	14.9	32.7	32.7	17.7
Կապիտալ ծախսեր	148.1	222.0	267.4	185.9
Ներքին ֆինանսավորում	93.6	89.0	134.5	107.9
Արտաքին ֆինանսավորում	54.5	133.0	133.0	78.1
Պետական բյուջեի պակասուրդ	(105.4)	(151.6)	(151.6)	(42.5)




Հարկաբյուջետային քաղաքականության դերը

Հարկաբյուջետային քաղաքականությունը պետության մակրոտնտեսական քաղաքականությունն առանցքային ուղղություններից է և իրենից ներկայացնում է կառավարության կողմից հարկերի և ծախսերի փոփոխության հետ կապված միջոցառումների ամբողջություն՝ նպատակ ունենալով ազդել տնտեսության վրա:





Հարկաբյուջետային քաղաքականության նպատակները






Բիզնես ցիկլերը և հարկաբյուջետային քաղաքականությունը


Խելամիտ և արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է լինի հակացիկլիկ՝

- խթանող՝ տնտեսության անկման շրջանում
- զսպող՝ տնտեսության վերելքի շրջանում



Ցիկլային քաղաքականություններ


- Հարկաբյուջետային
- Դրամավարկային



Տնտեսության ներուժը և հարկաբյուջետային քաղաքականությունը

Տնտեսության ներուժը փոխվում է հարկաբյուջետային և կառուցվածքային բարեփոխումների միջոցով:


Կառուցվածքային բարեփոխումներ և հարկաբյուջետային քաղաքականություն






Հարկաբյուջետային կանոններին համահունչ կառավարության պարտք/ՀՆԱ-ն նվազում է՝ ապահովելով 2023թ. թիրախի վաղաժամ ապահովումը

2019-2020թթ. կառավարության պարտքի բեռը 50%-ից նվազում է:







Պարտքի կայունությունը և հարկաբյուջետային քաղաքականությունը

Խելամիտ հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է պետական պարտքը պահի կայունության տիրույթում՝ զսպելով հնարավոր ռիսկերը:

ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ, %





Պարտքի կայունությունը և հարկաբյուջետային քաղաքականությունը

Պարտքի նվազեցման քաղաքականությունը թույլ է տալիս ունենալ ցածր ռիսկային պարտք:

Ռիսկերի քարտեզ*


Պարտքի մակարդակ	հրական ՀՆԱ աճի շուկա	Առաջնային հաշվեկշռի շուկա	հրական տոկոսադրույքի շուկա	Փոխարժեքի շուկա	Պայմ. Պարտավորությունների շուկա
Համախառն ֆին. պահանջ	հրական ՀՆԱ աճի շուկա	Առաջնային հաշվեկշռի շուկա	հրական տոկոսադրույքի շուկա	Փոխարժեքի շուկա	Պայմ. Պարտավորությունների շուկա
Պարտքի ֆինանսավորում	Շուկայի գնահատական	Արտաքին ֆին. պահանջ	Կարճաժամկետ պարտքի փոփոխ.	Ոչ ռեզ. պարտք	Արտարժույթային պարտք

* Կառուցված է «MAC DSA» (Debt sustainability analysis for market-access countries) մեթոդաբանությամբ՝ 2019-2023թթ. ՀՀ կառավարության պարտքի նվազեցման վերանայված ծրագրի հիման վրա



Պարտքի կայունության ապահովմանը համահունչ՝ պետական բյուջեի պակասուրդի մակարդակ


Կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշների պայմաններում կառավարության պարտքի բեռի կայունացումն ապահովելու համար պետական բյուջեի պակասուրդի մակարդակը կանխատեսվում է շուրջ 2.3% ՀՆԱ-ի չափ:






Հարկային եկամուտները շարունակում են բարելավվել

2020թթ. կանխատեսվում է հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շուրջ 0.3 տոկոսային կետ բարելավում:







- Հաշվի են առնվել նաև նախատեսվող օրենսդրական փոփոխություններից ակնկալվող հարկային կորուստները




Ուժի մեջ է մտնում երկարաժամկետ տնտեսական աճը խթանող հարկային բարեփոխումների փաթեթը

Հարկային բարեփոխումների ազդեցությունը տնտեսական աճի վրա (*ՀՀ ՖՆ գնահատական ընդհանուր հավասարակշռության մոդելով)







Երկարաժամկետ տնտեսական աճը խթանող պետական ներդրումների մակարդակի էական բարելավում՝ պահպանելով Ոսկե կանոնները




Կապիտալ ծախսերի և պակասուրդի կշիռը ՀՆԱ-ում, %




Ընթացիկ ծախսերի և հարկեր, փոփոքների կշիռը ՀՆԱ-ում, %



Խթանող հարկաբյուջետային քաղաքականություն 2020թ.





2020թ. պետական բյուջեի ամփոփ մակրոտնտեսական շրջանակ

	Փաստ.	2020 բյուջե	
	2018	2019	2020
Տնտեսական աճ (ՀՆԱ-ի իրական աճ)	5.2	6.3	4.9
Սպառման մակարդակ (Սպառում/ՀՆԱ)	92.7	93.3	92.5
Ներդրումների մակարդակ (Ներդրում/ՀՆԱ)	22.4	22.3	22.6
ՀՆԱ դեֆլյատոր	2.5	2.9	3.0
Միջին գնաճ	2.5	1.7	2.1
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ	-9.4	-7.0	-6.0
Արտահանում/ՀՆԱ	37.5	37.5	39.2
Ներմուծում/ՀՆԱ	52.9	52.1	52.5
Հարկային եկամուտներ/ՀՆԱ	21.0	22.3	22.6
Ծախսեր/ՀՆԱ	24.1	24.5	26.2
Պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ	(1.8)	(0.6)	(2.3)
Կառավարության պարտք/ՀՆԱ	51.3	49.6	48.2

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

